ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# ԶԵԿՈՒՅՑ

## Հայաստանի Հանրապետության 2017 թ. խոշորացվող համայնքների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների

# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ

## համայնք

**(Գյուլագարակ, Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո, Վարդաբլուր բնակավայրեր)**

Հեղինակ՝ Միեր Հակոբյան

Երևան – 2017




# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ
## համայնքը՝ հպանցիկ

**Վարչական տարածքը՝** 10 082 հա

**Բնակչությունը՝** 8 887 մարդ

**Մարզը՝** Լոռի

**Համայնքի կենտրոնը՝** Գյուլագարակ

**Բնակավայրերը՝** Գյուլագարակ, Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո, Վարդաբլուր

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. հունիսի 9-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն՝ Լոռու մարզի Գյուլագարակ խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 7 գյուղական բնակավայր՝ Գյուլագարակ (համայնքի կենտրոն), Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո, Վարդաբլուր:

### Համայնքի ընդհանուր նկարագիրը

Համայնքի բնակավայրերը տեղակայված են ՀՀ Լոռու մարզի կենտրոնական հատվածում: Բնակավայրերի գոտիականությունը լեռնային է. ծովի մակերևույթից բարձրությունն ըստ բնակավայրերի տատանվում է 1300-1480 մետրի սահմաններում: Համայնքի ընդհանուր վարչական տարածքը խոշորացումից հետո կազմում է **10 082** հա: Տարածքով ամենամեծ բնակավայրը Կուրթանն է (1919 հա), ամենափոքրը՝ Հոբարձին (602 հա): Համայնքի կենտրոն Գյուլագարակն այս չափանիշով 3-րդն է (155 հա):

### Բնակչությունը

Համայնքի ընդհանուր բնակչությունը 2017 թ. դրությամբ կազմում է **8 887** մարդ: Բնակչությամբ ամենամեծ բնակավայրը Գյուլագարակն է (2352 մարդ), իսկ ամենափոքրը՝ Պուշկինոն (447 մարդ): Համայնքում բնակչության խտությունը կազմում է 91.28 մարդ/կմ$^2$: Ամենախիտ բնակեցված բնակավայրը Գյուլագարակն է (151.55 մարդ/կմ$^2$), ամենանոսրը՝ Պուշկինոն (24.72 մարդ/կմ$^2$): Բնակավայրերի վարչական տարածքների ու բնակչության թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** Գյուլագարակ խոշորացվող համայնքում ներառված բնակավայրերի վարչական տարածքն ու բնակչությունը

| № | Բնակավայրի անվանումը | Վարչական տարածքը (հա) | Հաշվառված բնակչությունը (2017 թ. դրությամբ) | Բնակչության խտություն (մարդ/կմ²) |
|---|---|---|---|---|
| 1 | **Գյուլագարակ** | 1552 | **2352** | 151.55 |
| 2 | Կուրթան | 1919 | 1969 | 102.61 |
| 3 | Գարգառ | 1458 | 1469 | 100.75 |
| 4 | Վարդաբլուր | 1528 | 1318 | 86.26 |
| 5 | Հոբարձի | 602 | 757 | 125.75 |
| 6 | Ամրակից | 1215 | 575 | 47.33 |
| 7 | Պուշկինո | 1808 | 447 | 24.72 |
| | **Ընդամենը /միջինը/** | **10 082** | **8 887** | **91.28** |

**Քարտեզ 1.** Գյուլագարակ համայնքի բնակչության տեղաբաշխումն (մարդ)՝ ըստ բնակավայրերի




## Բնակավայրերի տեղաբաշխումն ու տրանսպորտային կապերը

Գյուլագարակը մյուս բնակավայրերի համեմատ գտնվում է կենտրոնական դիրքում: Համայնքի կենտրոնին ամենամոտ տեղակայված բնակավայրերը Գարգառն ու Վարդաբլուրն են (4 կմ), ամենահեռուն՝ Կուրթանը (7.6 կմ): Գյուլագարակից բոլոր բնակավայրերի միջին հեռավորությունը 5.05 կմ է, հասնելու համար պահանջվող միջին ժամանակը՝ 7.5 րոպե: Գարգառն ու Ամրակիցը տեղակայված են Մ-3 միջպետական նշանակության ճանապարհի վրա, Կուրթանն ու Վարդաբլուրը՝ Н-24 ճանապարհի վրա, իսկ Գյուլագարակը՝ երկու ճանապարհների հատման կետում: Հոբարձին ու Պուշկինոն գտնվում են մոտակա մայրուղիներից համապատասխանաբար 1.3 և 2.6 կմ հեռավորության վրա:

Բնակավայրերից ոչ մեկում չի գործում ներհամայնքային տրանսպորտ, իսկ Գարգառում և Պուշկինոյում չի գործում նաև միջհամայնքային տրանսպորտ: Մնացած բնակավայրերից առկա են կանոնավոր երթուղիների դեպի Ստեփանավան և Վանաձոր, իսկ Գյուլագարակից՝ նաև Տաշիր:

Համայնքի տրանսպորտային կապերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2.** Գյուլագարակ համայնքի տրանսպորտային կապերը

| Բնակավայր | Ներքին ճանապարհների երկարությունը (կմ) | Հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ) | Հասնելու համար պահանջվող ժամանակ (րոպե) | Հեռավորությունը մոտակա մայրուղուց |
|---|---|---|---|---|
| **Գյուլագարակ** | 20 | - | - | 0 |
| Ամրակից | 7.5 | 5.5 | 7 | 0 |
| Գարգառ | 5 | 4 | 6 | 0 |
| Կուրթան | 3 | 7.6 | 9 | 0 |
| Հոբարձի | 4 | 2.9 | 5 | 1.3 |
| Պուշկինո | 3 | 6.3 | 11 | 2.6 |
| Վարդաբլուր | 2 | 4 | 7 | 0 |
| **Միջինը** | **6.35** | **5.05** | **7.50** | **0.56** |

Կուրթանում ներհամայնքային ճանապարհները գտնվում են բավարար վիճակում: Գյուլագարակի ու Հոբարձիի ավտոճանապարհները ամբողջության հողային են և հիմնանորոգման կարիք ունեն, իսկ Ամրակիցի, Գարգառի, Պուշկինոյի և Վարդաբլուրի ավտոճանապարհները մասնակի ասֆալտապատ են և ընթացիկ նորոգման կարիք ունեն:

Գյուլագարակի հեռավորությունը մարզկենտրոն Վանաձորից 27.3 կմ է:

### Խմելու ու ոռոգման ջրամատակարարումը և աղբահանությունը

Համայնքի 7 բնակավայրերից հինգում ջրամատակարարումն իրականացվում է է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի, իսկ երկուսում՝ ՏԻՄ-ի կողմից: Գյուլագարակում, Կուրթանում, Հոբարձիում և Վարդաբլուրում խողովակաշարերը հիմնանորոգման, իսկ մնացած բնակավայրերում՝ մասնակի նորոգման կարիք ունեն: Բացառությամբ Գարգառի՝ ջրամատակարարումը շուրջօրյա է: Գարգառում և Պուշկինոյում, որտեղ ջրամատակարարումը կատարվում է ՏԻՄ-երի կողմից, այն տրամադրվում է անվճար, իսկ Ամրակիցում ջրամատակարարման ծախսերը հոգում է համայնքապետարանը:

Բնակավայրերում ջրամատակարարման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3.** Գյուլագարակ համայնքում խմելու ջրի մատակարարումը

| Բնակավայր | Ջրամատակարարման կառավարողը | Ջրամատակարարման ժամակարգը | Սակագինը (1 մ$^3$) | Խողովակաշարի տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|
| **Գյուլագարակ**[1] | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 140 դր. | հիմնանորոգման կարիք |
| Ամրակից | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Գարգառ | ՏԻՄ | 12 ժամ | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Կուրթան | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 150 դր. | հիմնանորոգման կարիք |
| Հոբարձի | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 150 դր. | հիմնանորոգման կարիք |
| Պուշկինո | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Վարդաբլուր | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 157 դր. | հիմնանորոգման կարիք |

[1] Գյուլագարակի մեկ թաղամասում խմելու ջուր չի մատակարարվում՝ ենթակառուցվածքների բացակայության պատճառով:

Համայնքի բնակավայրերից ոչ մեկում ոռոգման համակարգ չկա: Պուշկինոյում հողերն անջրդի են, իսկ Կուրթանում և Վարդաբլուրում խորհրդային տարիներին եղել են ոռոգման համակարգեր, սակայն այժմ դրանք օգտագործման ենթակա չեն: Արդյունքում, համայնքում մշակվում են հիմնականում որոշ տեսակի հացահատիկներ, մինչդեռ ոռոգման համակարգերի առկայությունը թույլ կտար աճեցնել նաև բանջարաբոստանային մշակաբույսեր:

Աղբահանությունը բոլոր բնակավայրերում իրականացվում է կենտրոնացված եղանակով: Կուրթանում ու Պուշկինոյում այն իրականացվում է շաբաթը մեկ անգամ, Գյուլագարակում, Գարգառում ու Վարդաբլուրում՝ 10 օրը մեկ անգամ, Ամրակիցում՝ երկու շաբաթը մեկ անգամ, իսկ Հոբարձիում՝ երկու-երեք ամիսը մեկ անգամ: Աղբահանության նպատակով Գարգառում օգտագործվում է բնակավայրին պատկանող տրակտորը, իսկ մյուս բնակավայրերը պայմանագրեր ունեն ֆիզիկական անձանց հետ: Գյուլագարակից, Ամրակիցից և Հոբարձիից աղբը տեղափոխվում է Ստեփանավանի աղբավայր, իսկ մյուս բնակավայրերն այն տեղափոխում են մոտակա չօգտագործվող տարածքներ: Բոլոր բնակավայրերում աղբահանությունն անվճար է:

**Կրթական հաստատությունները**

Համայնքում գործում է 13 կրթական հաստատություն, որոնցից 6-ը մանկապարտեզներ են, 1-ը՝ հիմնական, և 6-ը՝ միջնակարգ դպրոցներ (աղյուսակ 4): Համայնքում չեն գործում երաժշտական, (գեղ)արվեստի ու մարզական դպրոցներ:

**Աղյուսակ 4.** Գյուլագարակ համայնքում առկա կրթական հաստատությունները

| Բնակավայր | Մանկապարտեզ (հաճախողների քանակ) | Հիմնական դպրոց (հաճախողների քանակ) | Միջնակարգ դպրոց (հաճախողների քանակ) |
|---|---|---|---|
| **Գյուլագարակ** | 1 | | 1 (380) |
| Ամրակից | 1 (13) | | 1 (50) |
| Գարգառ | 1 (20) | | 1 (190) |
| Կուրթան | 1 (50) | | 1 (175) |
| Հոբարձի | 1 (35) | | 1 (80) |
| Պուշկինո | - | 1 (60) | - |
| Վարդաբլուր | 1 (40) | | 1 (140) |
| **Ընդամենը** | **6** | **1** | **6** |

Գյուլագարակի մանկապարտեզը նոր է վերանորոգվել և շահագործման է հանձնվելու 2018 թ. փետրվարից: Գարգառի մանկապարտեզը գտնվում է բավարար վիճակում: Ամրակիցի, Հոբարձիի, Վարդաբլուրի մանկապարտեզներն ունեն ընթացիկ նորոգման, իսկ Կուրթանինը՝ հիմնանորոգման կարիք:

Պուշկինոյի հիմնական դպրոցը, ինչպես նաև Ամրակիցի, Գարգառի ու Հոբարձիի միջնակարգ դպրոցները գտնվում են բավարար վիճակում, իսկ Գյուլագարակի, Կուրթանի ու Վարդաբլուրի դպրոցներն ունեն ընթացիկ նորոգման կարքի: Աշակերտների թվով ամենամեծը Գյուլագարակի միջնակարգ դպրոցն է (380 աշակերտ), ամենափոքրը՝ Ամրակիցի միջնակարգ դպրոցը (50 աշակերտ):

**Առողջապահական հաստատությունները**

Համայնքում գործում է չորս բուժկետ Գյուլագարակում, Ամրակիցում, Հոբարձիում և Պուշկինոյում և երեք բուժամբուլատորիա Գարգառում, Կուրթանում և Վարդաբլուրում: Գյուլագարակում գործում է նաև դեղատուն: Հոբարձիի բուժկետը հիմնանորոգման կարիք ունի, իսկ մնացած բուժհաստատությունները գտնվում են բավարար վիճակում: Համայնքում չի գործում պոլիկլինիկա և հիվանդանոց:

**Մշակութային հաստատությունները**

Համայնքի երկու բնակավայրերում՝ Գյուլագարակ և Գարգառ գործում են մշակույթի տներ, որոնց դահլիճները կարող են տեղավորել համապատասխանաբար 300 և 220, հանդիսական: Երկուսն էլ գտնվում են բավարար վիճակում: Կուրթանի ու Վարդաբլուրի մշակույթի տները՝ նախատեսված համապատասխանաբար 500 և 130 հանդիսականի համար անբավարար ֆիզիկական վիճակի պատճառով չեն գործում և հիմնանորոգման կարիք ունեն:

Համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը ներկայացված է քարտեզ 2-ում:

**Քարտեզ 2.** Գյուլագարակ համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը




**Համայնքի հիմնական կարիքները**

Հետազոտության արդյունքում առանձնացվել են բնակավայրերի երեք հիմնական առաջնահերթությունները, որոնք նշվել են համայնքապետարանի ներկայացուցիչների կողմից:

Հիմնախնդիրների մեծամասնությունն առաջնային է մի քանի բնակավայրերի համար, իսկ մի քանիսը հատուկ են միայն տվյալ բնակավայրին: Ընդհանուր առաջնահերթությունններն են.

- **խմելու ջրի ենթակառուցվածքների նորոգումը** (Գյուլագարակ, Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո, Վարդաբլուր),
- **ոռոգման համակարգի կառուցումը/հիմնանորոգումը** (Գարգառ, Կուրթան, Վարդաբլուր),
- **ավտոճանապարհների վիճակի բարելավումը** (Գյուլագարակ, Ամրակից, Պուշկինո),
- **գազաֆիկացումը** (Ամրակից, Պուշկինո),

Գարգառում հրատապ է համարվում նաև կոյուղու կառուցումը, իսկ Կուրթանում՝ հակակարկտային կայանների ավելացումը: Հոբարձիում առաջնային նշանակություն ունի մանկապարտեզի ու բուժկետի, իսկ Վարդաբլուրում՝ տանիքների վերանորոգումը:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից

Ընկերության գլխամասային գրասենյակներ՝

Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**
Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de